

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Շահող կտրոն» վիճակահանության արդյունքների մասին

ՀԴՄ կտրոնների շահման համար նախատեսված հատուկ համարների 2010 թվականի հունիսի 5-ին կայացած վիճակահանության արդյունքում հայտնի դարձած շահող թվերն են (առաջին նիշից սկսած հաջորդական հերթականությամբ)՝

4	4	8	3	7	2	3	6
---	---	---	---	---	---	---	---

2010 թվականի հունիսի 5-ին կայացած վիճակահանությանը մասնակցել են միայն 2010 թվականի մայիսի 1-ից մինչև 31-ը ներառյալ քաղաքացիների կողմից ստացած ՀԴՄ կտրոնների շահման համար նախատեսված հատուկ համարները:

Շահող կտրոններ են համարվում այն կտրոնները, որոնց առաջին կամ վերջին 3, առաջին կամ վերջին 4, առաջին կամ վերջին 5, առաջին կամ վերջին 6, առաջին կամ վերջին 7, կամ առաջին 8 թվերը համընկնում են վիճակահանության արդյունքում հայտնի դարձած թվերին՝ ըստ հաջորդական հերթականության: Ընդ որում, եթե առաջին և վերջին նիշերից սկսած 3 թվերն էլ համընկնեն միաժամանակ նույն հատուկ համարում, ապա պարզևավճարը կտրամադրվի յուրաքանչյուր համընկնման համար:

Քաղաքացիները շահումները կարող են ստանալ 2010 թվականի հունիսի 7-ից մինչև 30-ը ներառյալ «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ բաժանմունքներում՝ անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, ներկայացնելով նաև անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և կտրոնի բնօրինակը:

Շահում եք Դուք, շահում է պետությունը

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՅՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ